

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Սարգսյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Վ. Գաբրիելյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Վ. Քոչարյան	Երևանի պետական համալսարանի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Ա Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ա. Ղուկասյան	Հայաստանի բանկերի միության նախագահ
Ժ. Կարաասլանյան	«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Բ. Փափազյան	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն
Հ. Գրիգորյան	ասպիրանտ

1. Մասնագիտական կրթության որակի ապահովման ուղղությունների հայեցակարգի մասին

(Ռ. Թովիջյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդհանուր առմամբ հավանություն տալ Մասնագիտական կրթության որակի ապահովման ուղղությունների հայեցակարգի նախագծին.

2) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովիջյանին լրամշակել ներկայացված հայեցակարգը, մասնավորապես՝

ա. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանի առաջարկությանը համապատասխան՝ «պետական գրանցամատյանում գրանցումներ և փոփոխություններ կատարելու իրավունքը կվերապահվի բացառապես ՈԱԱԿ-ին» բառերը փոխարինելով «հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցումներ և փոփոխություններ կատարելու իրավունքը կվերապահվի բացառապես ՈԱԱԿ-ին» բառերով,

բ. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ Ա. Ղազարյանի առաջարկությանը համապատասխան՝ լրացնել նոր կետով, ըստ որի տեղական վարձու փորձագետների վճարումները կիրականացվեն հիմնադրամի միջոցով՝ բուհերի կողմից փոխանցվող միջոցների հաշվին.

3) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանի, ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Կարապետյանի, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանի առաջարկություններին համապատասխան՝ քննարկման առարկա դարձնել «համալսարան», «ինստիտուտ», «ակադեմիա» սահմանումների (կառուցվածքային տեսանկյունից) հստակեցման հարցը՝

ա. հետագայում այն լիցենզավորման գործընթացում կիրառելու համար,

բ. անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն «Կրթության մասին»

ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը փոփոխելու վերաբերյալ:

2. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2010-2015 թվականների ռազմավարական ծրագրի մասին

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի առաջարկությանը համապատասխան՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի և ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Կարապետյանի հետ համատեղ խմբագրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2010-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, մասնավորապես, հստակ նկարագրելով հավատարմագրման գործընթացի անցումային փուլը և մանրամասն ուսումնասիրել ու գնահատել ժամանակացույցի իրականացման համար առկա ռեսուրսները և ծախսերը.

2) հավանություն տալ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2010-2015 թվականների ռազմավարական ծրագրի խմբագրված տարբերակին:

3. Հիմնադրամի նոր կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատման մասին

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը.

2) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝ ևս մեկ անգամ դիմել Թվինինգ ծրագրին՝ համապատասխան փորձագետների ներգրավման համար և արդյունքների մասին զեկուցել հաջորդ նիստում:

4. ՈԱԱԿ-ի բյուջեի տարեկան ծախսային հոդվածների վերանայման մասին

(Ռ. Թովիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ՈԱԱԿ-ի բյուջեի տարեկան ծախսային հոդվածների վերանայման առաջարկը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանի առաջարկությանը համապատասխան քննարկել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի» գործառույթները ՈԱԱԿ-ին փոխանցելու հնարավորության հարցը, որի պարագայում ֆինանսական միջոցները ևս կուղղվեն դեպի ՈԱԱԿ և արդյունքների մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ